Հայտարարություն

Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր

Վարկ թիվ 5398-ԱՄ

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Սոցիալական պաշտպանվածության վարչարարության երկորդ ծրագիր» վարկային ծրագրի շրջանակում **Ծրագրի տնտեսագետի** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Հանձնարարականի նպատակն է ԾՀԳ-ում տնտեսագետ մասնագետի աջակցությամբ ապահովել ՍՊՎԾ-2-ի շրջանակներում իրականացվող ենթածրագրերի իրականացման հետ կապված ֆինանսական և տնտեսագիտական ուղղվածություն ունեցող գործընթացների արդյունավետ իրականացումը, մասնավորապես՝ գնման մրցույթների նախահաշիվային արժեքների հաշվարկման, հայտատու կազմակերպությունների ֆինանսական առաջարկների գնահատման, ֆինանսական բաղադրիչ պարունակող ենթածրագրերի իրականացման գործընթացները վերահսկելու, ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ ներկայացնելու (բացառությամբ ԱՇԱԾ-ների շրջանակներում ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և շինարարական ակտերի), ինչպես նաև աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի (ԱՇԱԾ) շրջանակներում ֆինանսական և տնտեսագիտական ուղղավծության գործընթացների նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2016թ. Հուլիսից մինչև 2018 դեկտեմբերի 31-ը:

Խորհրդատուն պետք է ունենա՝

- բարձրագույն ֆինանսատնտեսագիտական կրթություն (Գործարար կառավարման մագիստրի որակավորումը ֆինանսների և հաշվապահության ոլորտում կդիտվի որպես առավելություն),
- առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, գործարար ծրագրերի ֆինանսական կառավարման, վերահսկողության իրականացման և/կամ գնումների կազմակերպման փորձ,
- ՀՀ-ում ծրագրային վարկավորման և վարկային քաղաքականության ուղղությամբ փորձառություն,
- ֆինանսահաշվապահական ոլորտին առնչվող խոր գիտելիքներ,
- կազմակերպչական և հաղորդակցական լիարժեք հմտություններ,
- հայերենի գերազանց և անգլերենի լավ իմացություն,
- համակարգչային բավարար գիտելիքներ:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **սույն թվականի հուլիսի 06-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տ.Մեծ 4
Հեռախոս. (037411) 910581
Ֆաքս. (037410) 545-708
Էլ. փոստ. info@ffpmc.am